# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԷՍ-2019/12, 29.01.2019թ.

**Բողոք բերող անձ՝** «Այ Էմ Առ» ՍՊԸ

**Պատվիրատու** ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ընթացակարգի ծածկագիրը՝** «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթ

**Գնման առարկա** ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ուսումնասիրությունների իրականացման ծառայությունների ձեռքբերում

**Բողոքի պահանջը՝** Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին «Այ Էմ Առ» ՍՊԸ-ին տրամադրել նույն մրցույթի ընտրված մասնակից ճանաչված «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի՝ հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

***Բողոք բերող՝*** «Այ Էմ Առ» ՍՊԸ
հասցեն՝ ք. Երևան, Փարպեցի 16, բն.4
info@imr.am 093692519
***Պատվիրատու՝*** ՀՀ պաշտպանության նախարարություն
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բագրևանդի 5,0044

***Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝***

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների
համար ուսումնասիրությունների իրականացման ծառայությունների
ձեռքբերման նպատակով
հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1»
ծածկագրով բաց մրցույթ

ԲՈՂՈՔ

**Գործի համառոտ նկարագրությունը և փաստերը.**

Ս.թ. հունվարի 15-ին, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ուսումնասիրությունների իրականացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի (այսուհետև՝ Մրցույթ) շրջանակներում՝ անգործության ժամանակահատվածում, նույն մրցույթի մասնակից «Այ Էմ Առ» ՍՊԸ-ն էլեկտրոնային գրությամբ դիմել է Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով տրամադրել Մրցույթի շրջանակներում բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից ճանաչված՝ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔԱՅԻՆ
N 3009-19
«29» 01 19

փաստաթղթերի ամբողջ փաթեթը՝ ներառյալ Մրցույթի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Սակայն, 21.01.2019թ. դրությամբ «Այ Էմ Առ» ՍՊԸ-ին գնահատող հանձնաժողովի կողմից չեն տրամադրվել նշված փաստաթղթերը, ինչպես նաև որևէ պատասխան չի ներկայացվել՝ դրանք չտրամադրելու վերաբերյալ: Նշված հանգամանքը հիմնավոր կասկած է առաջացրել ընկերության մոտ՝ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները Մրցույթի հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ:

**Բողոքի իրավական հիմքերը և ապացույցները.**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով ***մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով*** կազմակերպում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ գնային առաջարկի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները ***հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:*** Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջը ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում են բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարելու դրանք և վերադարձնում է քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

Այսպիսով, «Այ Էմ Առ» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը կոպտորեն խախտել է Մրցույթի ընտրված մասնակից ճանաչված ընկերության ներկայացված որակավորման փաստաթղթերն ստանալու և դրանց ծանոթանալու՝ Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված մեր իրավունքը, դրանով իսկ ուղղակիորեն անտեսելով գնման գործընթացի ***թափանցիկ և հրապարակային հիմունքներով*** կազմակերպման՝ Օրենքով ամրագրված սկզբունքը:

Նկատի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին «Այ Էմ Առ» ՍՊԸ-ին տրամադրել նույն մրցույթի ընտրված մասնակից ճանաչված «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի՝ հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Կից ներկայացնում եմ բողոքի համար կատարված վճարման անդորրագիրը:

«Այ էմ Առ» ՍՊԸ -ի տնօրեն՝

Ատղիկ Գասպարյան

« 29 » հունվարի 2019թ.

«ԱՅ ԷՄ ԱՌ»
"АЙ ЭМ АР"
"I M R"
02666497